

Ֆ.ԿՈՆ

ԻՆՉՊԵՍ ՓԱԽՑՐԻՆ ՏԱԱԾ
ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐԻՆ



891. ՓՈՒ
4-70

ԿԱՐՈՅ
1937

NOV 2011

891-715.

4-70

ԱՐ

Ֆ. ԿՈՆ

ԻՆՉՊԵՍ ՓԵԼԽՑԲԻՆ
ՏԱՄԷ ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐԻՆ

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

ՀՀՀ
ՀՀՀ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՑԵՐԿՐԱՅԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՅ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ - 1937

23/05/2013

3734



Ответ. редактор Г. Д. Левоньян
Тех. редактор Д. М. Джинибалаян

Уполномочен № О - 473. Сдано в набор 20 марта 1937 г.
Подписано в печать 3 мая 1937 г. Формат Б-5. Оо'ем
178 л. Тираж 5000. Заказ № 528.

Типография Краевого Армянского Издательства „ГРО“.
Ростов—Дон, Ворошиловский пр. № 27.

1904թին արդեն զգացվում եր, վոր հեղափոխությունը մոտենում է. Յերբ յիս աքսորից վերադարձա, աչքերիս չհավատացի. Պատանեկությանս որերին, յերբ զեռ նոր ելի սկսում հեղափոխական աշխատանքը, մենք մի բուռ եյինք: Իսկ 1904 թին հեղափոխական բանվորների թիմը արդեն հազարների յեր հասնում: Տեղի եյին ունենում ցույցեր, միտինգներ: Փողոցներում հնչում եյին հեղափոխական լիրգեր, տեղտեղ յերեռում եյին կարմիր դրոշակներ: Ցուցաբարներին հետապնդում եր վոստիկանությունը, բայց բանվորների հետ զլուխ հանել չեր կարողանում: Մի տեղից քշում եր, մի ուրիշ տեղ եյին հավաքվում նրանք:

Ակզրում յես միայն հետեռում եյի, թե ինչ եկատարվում չորս կողմս, բայց մի ամիս չանցած յես արդեն աշխատանքի լծվեցի:

Յեռևն ժամանակ եր: Միտինգից՝ միտինգ
եյինք գնում, ժողովից՝ ժողով, մեկ ցույցից՝ մյուսը՝
իսկ յիրբ 1905թ. հունվարին իմացանք Պետեր-
բուրգի բանվորների յելույթի մասին, բանվորա-
կան Վարշավը մարտական կերպարանք ընդունեց:
Նույնիսկ յերեխաներն ել անմասն չմնացին։
Նրանք քարեր նետելով ջարդում եյին փողոցի-
լապտերները. այնպիս վոր բանվորներին հետապն-
դող կազակներն ու ժանդարմները չեյին կարո-
ղանում մթության մեջ զերք բանեցնել:

Փողոցները բռնված եյին բառիկադներով. կա-
զակների հետ տեղի ունեցող ընդհարումները հա-
ճախտկի դարձան. նրանց կրակոցներին բան-
վորները պատասխանում եյին նույնպես կրա-
կով։

Տարվա վերջին մենք լսեցինք Մոսկայի ապս-
տամբության մասին. Բանվորները հենց լուրի
եյին սպասում ուրիշ քաղաքներից, վորպեսզի
Վարշավում ել ապստամբություն սկսեն։

Նույն ժամանակ հայտնի յեղափ վոր ցարա-
կան կառավարությունը պատրաստվում ե Վար-
շավից դրբեր ուղարկել Մոսկվա՝ այստեղի ապս-
տամբությունը ճաշելու համար։ Այդ բանը չեր-
կարելի թույլ տալ կուսակցության ցուցմունք-
ներով քաղաքի կենտրոնում ցույց սարքվեց։
Ցույցը կազակներից պաշտպանելու համար,
առանձնացվեցին սիքանի տասնյակ բանվորներ։
Նրանք պետք ե դուրս գային կազակների առաջ

ու, ոռոմբեր նետելով, կազակների դեմն առնելին,
և այդպիսով հնարավորություն տային ցուցարա-
ներին հեռանալու։

Այն բան արվեց այնպես, ինչպես կույակ-
ցությունն եր կարգադրել։ Այս ցույցից հետո
իշխանությունը սիրտ չարեց զորքերը Մոսկվա
ուղարկելու։ Բայց ցույցը պաշտպանողներից ու
կազակներին կրակով դիմագրողներից միքանիսը
ձերբակալվեցին, դատի յենթարկվեցին ու մահվան
դատապարտվեցին։ Նրանց փակել ելին քննու-
թյան տակ գտնվողների բանտում։ Այստեղից
փախչելու մասին մտածել անգամ չեր կարելի։
Բանտը գտնվում եր քաղաքի կենտրոնում և պահ-
պանվում եր թէ զրսից և թէ ներսից, իսկ բան-
տի հարևան փողոցների բոլոր անկյուններում
կանգնած եյին զինվորների շղթաները։

Բայց մի որ, յերբ յես կուսակցության կենտ-
րոնական կոմիտեյի բյուրոյում որապահություն
եյի անում, ինձ մոտ յեկավ կուսակցական
«Յուլիան»։

— Վիտը խնդրում ե, վոր դուք նրան տեսու-
թյան գնաք։

— Ի՞նչ։

Յես ականջներիս չհավատացի։

— Վիտը խնդրում ե, վոր դուք նրան տեսու-
թյան գնաք։

Սիրիրից փախած փորձված կուսակցական,
կենտրոնական կոմիտեյի անդամ Վիտը, վոր

նստած ե Պավյակ կոչվող հոչակավոր բանտում, — «տեսության» ե կանչում ինձ՝ տաժանակիր աշխատանքից փախածիս ու անլեզալ ապրողիս, վորին վնատում ե վոստիկանությունը... Առաջին պահին դա մի շատ տարորինակ բան թվաց ինձ»

Սակայն կանչողը վիտն եր, մի լուրջ գործիչ վորի յուրաքանչյուր խոսքը կուված ե, յուրաքանչյուր գիրող մտածված:

— Նա ձեզ չասաց՝ ինչի՞ համար,

Յուլիան, վոր Վիտի քույրն եր ու շատ բանով նման եր յեղբորը, հանդարտ պատասխանեց:

— Վո՞չ: Միայն ասաց, վոր նրան տեսության գաք մորս հետ՝ իբրև մեր ազգականը: Համենայն դեպս մեր ազգականներից մեկի փաստաթղթերը յես վաղը ձեզ կհանձնեմ:

Այդ միջոցին մեկը ներս մտավ՝ հրահանգներ ստանալու համար: Յուլիան գնաց:

Մյուս որը, Վիտի մոր հետ, գնացի Պավյակ:

Չեմ կարող ասել, վոր յես հանգիստ սրտով անցա շեմքն այն բանտի, ուր քան տարի առաջ նստած եյի իբրև տաժանակիր աշխատանքի դատապարտված մի վոճագործ: Յես հասկանում ելի, վոր բավական եր ամենաաննշան մի պատահար, անսպասելի և չնախատեսված մի հանդիպում, վորպեսզի յես մնալի այս բանտում արդեն վոչ իբրև այցելու, այլ վորպես բնակիչ:

Մեզ տարան գրասենյակ: Բանտի չինովնիկ ները, սեղանների մոտ նստած, թղթեր եյին

զրում: Վերակացուներն անվերջ գնում - գալիս եյին, բանտարկվածներից վոմանց տանելով, մյուսներին ներս բերելով, իսկ գրասենյակը յերկուսի բաժանող մրջնորմի այս կողմում այցելուներս եյինք խռնվում:


Վիտի մայրը ներկայացրեց վորդու հետ տեսակցություն ունենալու համար ստացած թույլտվությունն իր և ազգականի անունով:

Հերթապահ՝ վերակացուն, առանց վորեե կասկածք, իսկույն գնաց Վիտին բերելու, և մի բոպե անց Վիտն արդեն կանգնած եր միջնորմի մյուս կողմում:

Սառը, կարճ և գործիմաց յեղանակով նա բացատրեց, թե ինչու յե ինձ կանչել: Խոսքն այն մասին եր, վոր պետք ե բանտից ազատել այն տասը ընկերներին, վորոնք ցույցը պաշտպանելու համար մահվան եյին դատապարտված: Մինչև գեներալ-նահանգապետը չհաստատեր դատավճիռը, նրանք պիտի մնային Պավյակում, իսկ մահապատիժն ի կատար ածելու համար նրանց պետք ե փոխադրեյին Վարշավի միջնաբերդը:

Դեռ ժամանակ կա, և նրանց վրկելու համար պետք ե ոգավել ալդ հանգամանքից:

Կարելի չեր կասկած ունենալ, վոր Վիտը յերեվակայություններով տարված մարդ ե, բայց և այնպես նրա ասածներն ինձ այնպիսի ցնորամիտ բան թվացին, վոր դժվար թե միտք ունենար լուրջ կերպով մտածել այդ մասին:



Բայց Վիտը հանդիսաւ շարունակում եր բացառ-
բել իր պլանը:

Պետք ե բանտապետին մի թուղթ գրվի զլիսա-
վոր վոստիկանապետ Մայերի ստորագրությամբ,
վոր այս-ինչ որը, այս-ինչ ժամին բանտ ե գալու
ժանդարմոների ուստմիստը կանվոյի* հետ միասին՝
մահվան դատապարտված այս-ինչ, այս-ինչ կա-
լանափորներին տանելու համար. հետեւաբար պետք
ե, վոր այդ կալանափորները նույն ժամին պատ-
րաստ լինեն մեկնելու. պետք ե պատրաստ լինի
նաև բանտային կարեթը. Սյս պլանն իրագործե-
լու համար մարդիկ ձարելն այնքան ել դժվար
չե. վճռական, համարձակ և հնարագետ մարդիկ
կդունվեն:

— Այս պլանի մեջ յելեվակայական վոչ մի
բան չկա, — ավելացրեց նա հանդարտ. բայց կտրա-
կան կերպով, կարծես կուանելով, թե ինչ տպա-
գորություն ե թողել ինձ վրա իր առաջարկու-
թյունը. — Միայն պետք և շտապել:

Յես այնքան եյի ապշել, վոր չկորողացա
նույնիսկ վորեն առարկություն անել Վիտին։
Մի պահ նա յել լոեց և ապա շարունակեց.

— Այդ բանը պետք ե անել և կարելի յե անել, —
անդում եր Վիտը. Դերձակների խմբակն զգեստ-
ները կպատրաստի, թիթեղագործները — գրլ-
խարկների վրայի նշանները, զինվորականները

* Կանվոյ — գահակախումբ, ուղեկցորդ։

«Վոստիկաններ» կամ «Ժանդարմներ» կպատրաստւն:

Ցես շատ լավ եյի հասկանում գործի բոլոր դժվարություններն, ինչպես նաև վտանգավոր լինելը (Վարշավում այդ ժամանակ պատերազմական դրություն եր հայտարարված), բայց միաժամանակ ըմբռնում ելի և այն հոկայական նշանակությունը, վոր կարող եր ունենալ գործի հաջող յելքը:

— Կփորձենք:

Վիտի ուզած պատասխանն ել հենց այդ եր: — Ցես հավատում եմ գործի հաջողությանը, — ասաց նա հրաժեշտի ժամանակ: — Հա, մի բան ել. մահապարտներին այս մասին վոչ մի խոսք: Նրանց հուզմունքը կարող ե տապալել գործը:

Ցես համաձայն եյի նրա ասածին: Ու մենք բաժանվեցինք:

Հենց նույն որը, կենտրոնական կոմիտեյի նիստում, յես զեկուցեցի Վիտի հետ իմ ունեցած տեսակցության մասին: Ինձ լսեցին առանց խոսքս ընդհատելու և յերբ իմացան գործի եյությունը, այլիս չեյին հետաքրքրվում նրա մանրամասնություններով: այդ աստիճան ցնորամիտ եր թվում բոլորին մեր առաջարկը:

— Ու այդ առաջարկն անողը Վիտն ե, — կասկածանքով հարց տվեց ծանրաբարո Յանը՝ կենտրոնական կոմիտեյի ամենանշանավոր անդամներից մեկը:

Բայց բոլորի համար անսպասելի կերպով վիտի նախագիծը ջերմորեն պաշտպանեց ժողովին ներկա գանգող Աննան:

— Իա այնքան ել ցնորամիտ բան չե, ինչպես ձեզ հիմա թվում ե, — հանգիստ ձայնով հայտարարեց նա:

Աննայի կարծիքը վորոշ կշիռ ուներ: Նրա այս հայտարարությունը հասկացվեց վորպես այդ գործին մասնակցելու առաջարկություն:

— Համենայն զեպս պետք ե գործել, — պնդեցի յես իրքեա պատասխան կենտրոնական կոմիտեյի մյուս անդամների կասկածամիտ ժպիտներին:

Գործ շատ կար անելու, ունրանք՝ այս ցնորական համարած պլանից ձեռք քաշելու համար՝ վճռեցին:

— Փորձեցեք: Առաջարկում եմ, — հայտարարեց Յանը, — այս գործը հանձնել Բոլեսլավին (իմ այն ժամանակվա կեղծանունը) և Աննային ու տալ նրանց հարկավոր յեղած միջոցները:

— Ցես թող նրանք ժամանակ առ ժամանակ գործի ընթացքի մասին զեկուցեն մեզ, — ավելացրեց կոմիտեյի անդամներից մի ուրիշը:

— Կարիք չկա, — ցանեց վրայից Յանը: — Այդ թողնենք իրենց հայեցողությանը:

Ամեն բան նախատեսող և շրջահայաց Աննան պահանջեց, վոր մինչեւ գործի ավարտումը մեղքուսակական ուրիշ աշխատանքներից ազատեն:

Սա թեև նրանց սրտին մոտ առաջարկ չեր, բայց և այնպես ընդունվեց:

Դժվար եղատմել հիմա այն բոլոր ապրում-
ները, վորոնք համակել եյին ինձ այն ժամանակի:
Մի կողմից՝ Պավյակի բանտում հեծում եյին
մահվան դատապարտված տասը բանտարկյալները,
վորոնց կյանքը կախված եր այն բանից, թե
կհաջողվի՞ արդյոք նրանց այնտեղից փախցնել.
մյուս կողմից՝ այդ բանը իրազործելու համար
պետք եր ազատ յեղողների միջից ճարել նույն
քանակությամբ ակտիվ ու անձնվեր կուսակցա-
կաններ, յենթարկել նրանց նույնպիսի վտանգի
և, անհաջողության դեպքում, հնարավորություն
տալ կառավարությանը տասը կախաղանի տեղ
կանգնեցնել քսան կախաղան: Ի՞նչ զլինի, յեթե
նրանք, բանտ մտնելով, թակարդի մեջ ընկնեն, ու
բանտի դարպասները փակիքն նրանց հետելից.
չե՞ վոր նրանք, նույնիսկ զինված լինելով, չեն
կարողանա դուրս պլծնել թակարդից, վորովհետեւ
քաշի բանտի վերակացուներից ու պահապան-
ներից, ևնց առաջին կրակոցը լսվելուն պես,
բանտի բակը կցվեն հարյուրավոր զինվորներ:

Վարշավում այդ ժամանակ պատերազմական
զրովթյուն եր. վորոցների բոլոր անկյուններում
զինվորական պահակներ եյին դրված, դիշեր-ցերեկ
ամենուրեք վխտում եյին ձիավոր կազակները:

Ըստ յերեսութին այդ մասին Աննան ել եր մտա-
ծում:

Ժողովում մնալու այլիս կարիք չկար. վեր կա-
ցա, վոր հեռանամ: Աննան կարծես արթնացավ.

— Բայց վնրտեղ և յերբ տեսնվենք:

— Այսոր ձեր տանը, յերեկոյան ժամը ութին:
Ինձ անհրաժեշտ եր մենակ մնալ ու մտածել:
Նորից չափել ու ձեել ամբողջ պլանը. զրա հա-
մար ել շտապով հեռացաւ:

Վիտը, ճիշտն ասած, պլանի միայն ուրվա-
գիծն եր տվել. իսկական պլանը պետք եր
գեռ մշակել, հաշվի առնելով գործի բոլոր ման-
րամասնությունները:

Այնաելյականը, վորն իսկապես ամբողջ
պլանի հիմքն եր,— դա զլխավոր վոստիկանա-
պետի ստորագրությունը կրող թուղթն եր: Ստո-
րագրության մասին մենք չեյինք մտահոգված,
վորովհետեւ շատ անգամ առիթ եյինք ունեցել
պասպորտների բլանկների վրա զլխավոր վոստի-
կանապետի ստորագրությունը զնելու: Այդ բա-
նին մենք արդեն վարժված եյինք: Բայց չե՞ վոր
պաշտոնական հիմնարկությունից դուրս յեկած
ամեն զրովթյուն պետք ե իր յելից համարն ու-
նենա: Բանտապետն ամեն որ զլխավոր վոստի-
կանապետից ծրաներ եր ստանում: Յէթե մեր
զրած պաշտոնաթղթի համարը չհամապատաս-
խանի նույն որն ստացված մյուս զրություն-
ների համարին, դա կարող ե կասկածի տեղիք
տալ. իսկույն կհեռախոսեն վոստիկանությանը,
և այդ չչին պատճառով մեր գործը կարող ե
քանդվել:

Յերբ տեսնվեցի Աննայի հետ, այս դժվարության վրա դարձրի նրա ուշադրությունը:

— Յելից թղթերի հերթական համարը մենք ձեռք կրերենք: — Վիտը բանտում կիմանա վերջին թղթերի համարները, մենք ել դրան մի 100—200 համար կավելացնենք, պրծավդնաց: Յես վախենում եմ ուրիշ բանից. ինձ դուր չի գալիս թուղթը վաղորոք ուղարկելու նախադիմք: Պետք ե այսպես անել, վոր բանտապետը հանկարծակի գա ու մտածելու ժամանակ չունենաւ Յես դրա հնարը գտել եմ արդեն: Այս բանում մեզ կոզի մեր աքսորում սովորած ուսուաց լեզուն: Մեր ռոտմիստրից բանտ գալուց մի ժամ առաջ դուք վոստիկանապետի անունից հեռախոսով կկարգադրեք, վոր ամեն ինչ պատրաստեն, և կհայտնեք բանտապետին, վոր թուղթն անձամբ կհանձնի նրան ռոտմիստրը: Գործն այսպես ավելի հաստատ կիմնի, — ավելացրեց նա վերջում:

Սկսեցինք մյուս հարցերի մասին մտածել:

Հետեյալ որն Աննան պետք ե բանակցություն ունենար գնրձակների ներկայացուցիչների հետ և պատրաստեր հարկավոր քանակությամբ փորձառու և փստահելի կար անողներ:

Այելի ծանր եր այն հարցը, թե արդյոք վոստիկանների պաշտոնը կատարելու համար ուժ քաշենք գործի սեղ և մանավանդ մամ ռոտմիստր» նշանակենք: Այս հարցը բարդանում եր այն պատճառուվ, վոր գործողությունը կատար-



վում եր լեհաստանում, ուր ուսուերեն լավ իմացողներն անդամ խոսում եյին լեհական առողջանությամբ:

• Այդ պաշտոնի համար կանգ առանք մի նախկին սպայի վրա:

Հետեյալ որը գնացի նրա մոտ Նա խելագարի տեղ ընդունեց ինձ:

— Ինչե՞ր եք ասում. վոչ մի կասկած, վոր այդ գլուխ գալու գործ չե: Ի՞նչնասպանություն անելու միտք չունեմ. Ամենեին:

Այս պատասխանից սիրտս կոտրած՝ քայլերս ուղեցի Յուրի մոտ, վորի անունը լերեկվա մեր զրուցի ժամանակ անցող սկի հիշել եյինք:

Համառոտ կերպով պատմեցի նրան գործի
եյությունը, Նա հուզվեց:

— Ասում եք՝ տասը մարդ են, Անպատճառ
կիմին: Այ թե ինչե՞ր են անում զզվելիները:

Յես համբերությամբ լսում եյի նրա բայա-
կանչությունները, յենթադրելով, վոր վերջիվերջո
կանցնի լու առաջարկի եյությանը: Տասը մարդու
առաջիկա մահապատճեն ավելի ցնցեց նրա յերե-
վակայությունը, քանթե նրանց փրկելու ծրա-
գիրը: Նա անդադար կրկնում եք՝

— Տասը մարդ... Տասը մարդ...

Յես կտրեցի նրա խոսքը.

— Նրանց կարելի յե փրկել: Համաձայն եք
մասնակցել այդ գործին:

— Համաձայն եմ, ամեն բանի համաձայն եմ:
Յես այդ անդամներին..

Յես բացատրեցի, թե ինչ դեր ենք հանձնում
նրան կատարելու:

Նա չհակաձառեց:

— Իսկ ի՞նչպես եք ոռուերենի կողմից:

— Վատ եմ:

Ու սկսեց ոռուերեն խոսել:

Նախադասությունների կազմությունը վոչինչ
տանելի յեր, սակայն արտասանությունը... Բայց
և այնպես հարկ յեղալ այդ ընտրության վրա
կան գնել, վորովհետեւ ուրիշ, ավելի հարմարավոր
մարդ չունեինք,

Նրան մասնող արտասանությունը մի կերպ

պատճառաբանելու համար հետագայում մեր նոր
թխած «ժանդարմների սոտմիստրի» անունը
դրինք «բաւոն ֆոն-Բուդբերգ», վորպեսզի նրան
ոռու շինած չլինենք: Իսկ յես, իբրև «սուսա-
կետ», ստիպեցի նրան անգիր անել միքանի այն-
պիսի նախադասություններ, վորոնցով նա պիտի
փալեր այդքան անսովոր իր պաշտոնը կատա-
րելիս:

Յեզ ծիծաղելի և ցավալի յեր լսելը, թե ինչ-
պես չարչարվում եր նա պետք յեղածին պիս
և ազգու յեղանակով արտասանելու „Պոշեվ-
լիվայտесь“ խոսքը, վորն ան ու սարսափ եր
բերում ստորագաս աստիճան ունեցողի վրա:

— Շեշտը, վերջից հաշվելով, չորրորդ վանկի
վրա պետք ե ընկնի, — բացականչում եր նա վա-
րանման սեջ: Յերբեք չեմ կարողանալու այդ
խոսքն արտասանել:

Բայց դրա փոխարեն նա իր արտաքին տես-
քով միանգամայն համապատասխանում եր իրեն
հանձնված զերին — լավ սանրած ու յերկու կողմէ
բաժանված լայն մորուք, վոսկի ակնոցներ... Յես
նայեցի նրան ու մտքումս պատկերացրի ժան-
դարմի մութ կապույտ համազգեստով, ուսադիր-
ներով, աքսելբանտներով և նույնիսկ Ստանիս-
լավի շքանշանը կրծին: Նա շատ, շատ համա-
պատասխան եր իր պաշտոնին:

Պետք եր «կանվոյի» մասին հոգ տանել, գնացի
Աննայի մոտ:

«Ավագի» պաշտոնը «ռոտմիստրի» պաշտոնից պակաս նշանակություն չուներ: Յեթև «ռոտմիստրը» գործ եր ունենալու միայն բանուի տեսչության հետ, ապա «ավագը» պետք ե հետեւ վեր, վոր իրեն ստորադրյալ ստորին պաշտոնյաները՝ բանտի վերակացուների և ժամապահ զինվորների հետ հարաբերություն ունենալիս՝ այսպահնեն սահմանված ձեվերը:

«Ռոտմիստրի» գերն «ավագի» գերից ավելի հեշտ եր այն պատճառով, վոր նա գործ պիտի ունենար բանտապետի հետ, այսինքն մի պաշտոնյայի, վորը մի աստիճանով իրենից ցածր ե, այնինչ «կանվոյիրները» բանտում ծառայող վերակացուների ու ժամապահների հետ աստիճաններով հավասար պաշտոնյաներ են: Այդ գեռ բոլորը չեր: «Ռոտմիստրը» բոլորովին գործ չպիտի ունենա փախցնելու յենթակա կալանավորների հետ, այնինչ «կանվոյիրները», նրանց ընդունելիս, հետները պետք ե այնպես վարվեն, ինչպես կվարվեյին իսկական կանվոյիրները:

Սակայն «ավագի» ընտրության խնդրում յես ու Աննան չեյինք սխալվում: Մենք մի հարմար մարդ ունեյինք. դա ընկեր Մարցելին եր: Բնավորությամբ հանդարտ, հաստատ կամքի տեր, խոհուն, հնարագետ, գիտակցական մի հեղափոխական եր նա, վորն արդեն միքանի անդամ, վտանգի ըոպեներին, լիակատար պաղարյունություն եր ցուցաբերել: Այս պատասխանատու և

վտանգավոր գերի համար նա միանգամայն պիտանի մարդ եր: Հենց վոր նրան կանչեցինք, յեկավ, առանց ընդհատելու լսեց մեր ասածն, ապա հանգամանորեն հարց ու փորձ անելով այն բաների մասին, ինչ վոր նրա համար պարզ չեր մեր պլանում, առանց այլևայլի և անվրդով ասաց:

— Համաձայն եմ:

Նույն որը, նրա հետ միասին, ընտրեցինք ապագա «կանվոյիրներին», կանչեցինք ու պայմանավորվեցինք նրանց հետ: Բանվորները մեր առաջարկին վերաբերվեցին բանվորի վայել կերպով:

— Պետք ե փրկել: Համաձայն ենք:

Տաքգլուխ և համարձակ «Ճաղատն» եր միայն, վոր գնալուց առաջ պահանջեց.

— Մի պայման, ընկերներ, յերբ վոր փախցրն ենք, յես կստեմ կառքի մեջը և առաջինը յես կհայտնեմ նրանց, վոր դեպի ազատություն ենք տանում:

Նախապատրաստական աշխատանքներն առաջին կնում:


Յես դիմեցի մեր զինվորական կազմակերպությանը, և նա անմիջապես նշանակեց մի սպահանագիչ, վորն ամենակարձ ժամանակում պետք ե սովորեցներ ապագա «կանվոյիրներին» և անց իրեն՝ «ռոտմիստրին» այն բոլորը, ինչ վոր կարող ե պետք գալ զինվորական զծով, իսկ բանտ

ուղեվորվելուց առաջ ել պետք ե ստուգեր։ Վոր չինի թե համազդեստները վորևե թիրությունը ունենան։ Մեզ հայտնի եյին դեպքեր, յերբ համազգեստների սահմանված տարազը չպահպանելու պատճառով տապալումներ եյին տեղի ունեցել։ Դրա համար ել վաղորոք միջոցներ ձեռք առանք, վոր այս կողմից կատարելապես ապահովված լինենք։

Հրահանգչին պատվիրեցի գալ այն տունը, ուր հավաքվելու եյին նրա բոլոր ապագա աշակերտները։ Հեւց նույն որը, յերբ ինքս յեկա այդ տունը, վոր ստուգեմ՝ արդյոք ամեն ինչ կարգին ե և ինչպես ե առաջ գնում գործը, յես վկա յեղա այնպիսի մը մարզանքի, վորի նմանը յերբեք չի յեղել։

Թե ինքը հրահանգիչը և թե աշակերտները, կոշիկնելը հանած — վորը բորիկ, վորը միայն գուլպայո՛, վորպեսզի աղմուկ չլինի, — ըստ հրամանի՝ մերթ դառնում եյին, մերթ յերկիարգ շարժվում, մերթ գնում եյին մեկ.մեկ՝ իրար հետեից, մերթ շարժվում եյին յերկ.յերկու, չորս չորս Ու այս բոլորը կատարվում եր լուս, խորին ուշադրությամբ։ և միայն կիսաձայն արտասանված հրամաններն եյին, վոր խանգարում եյին լուսթյունը։

Ինձ վոր տեսան, միքանի րոպե պարապմունքներն ընդհատեցին։ Հրահանգիչ սպան այնքան եր տարված իր գործով, վոր հրաման տվեց՝



— Հանդարտ:

Բայց իսկույն սթափվեց և, մարզանքին մաս-
նակցողների ընդհանուր քրքիջը հարուցելով, ինքն
իրեն ուղղեց՝

— Վոչ, վոչ: Աղաւտ:

Աննան ել չեր կարողացել համբերել: Նա յել
յեկավ, վոր ստուգի, թէ ինչպես են անցնում
պարապմունքները: Սպան մեզ միամտացը եց:

— Հրաշալի՛ կերպով յուրացնում են: Մարդ
ուղղակի ապշած ե մնում:

Ուրեմն այս կողմից գործը հարթված եր:

Մենք Աննայի հետ հեռացանք: Մեզ հանդիպո՞յ
հարյուրափոր սիրաբանող զույգերից վոչնչով
չտարբերվելով, թեվանցուկ ուղղվեցինք դեպի
նրա բնակարանը, առանց վորեե կասկած հարու-
ցելու ամենուրեք հանդիպող զինվորների, վոստի-
կանների և ժանդարմների պահակախմբերի մեջ:

Այստեղ, Աննայի մոտ, մի անգամ ևս մանրա-
մասնաբար ստուգեցինք այն ամենը, ինչ արգենտ
արված եր և ինչ-վոր գեռ պետք ե արվեր:

Գլխավոր վոստիկանապետի ստորագրությունը
կրող այն գրությունը, վորի մեջ հիշվելու յեն
կալանավորների անունները, հայրանունները և
ազգանունները, պատրաստում եր մեր պասպոր-
տային բյուրոն: Վաղն արդեն կստանանք այդ
թուղթը: Պակասում ե միայն թղթի յելից հա-
մարը և առաքման թվականը: սրանք պետք ե
զրված լինեն նույն թանաքով և նույն ձեռքով,

վորով գրված ե գլխավոր վոստիկանապետի ստո-
րագրությունը: Յելից թղթերի հերթական համարի
մասին արդեն հարցում ուղարկված ե բանտ-
վրա պատասխանը չի ուշանա: Մեր այս թուղթը
ներկայացնողը կիմնի «Փոն-Բուղբերգը»: Իսկ յես,
մերոնց բանտ համելուց մի ժամ առաջ, գլխա-
վոր վոստիկանապետի անունից հեռախոսով հրա-
ման կարձակեմ բանտապետին, վոր կալանավոր-
ներին փոխադրելու պատրաստությունը տեսնի:
Ստանալով այսպիսի հրաման «անձամբ Մայերից՝»
բանտապետն իսկի չի յել մտածի ստուգելու մա-
սին: Մանավանդ վոր՝ յես նրան կասեմ, վոր
կալանավորներին փոխադրելու հրամանափիրը
նրան կհանձննի ինքը ժանդարմների ոռոմիստրը:

Այս պլանը մենք ընդունեցինք վերջնականա-
պես:

Զգեստներն ու գենքերն արդեն պատվիրված
են և հետևյալ որը բերվելու յեն այն տունը,
վորտեղից գեպի բանան ե մեկնելու կեղծ վոստի-
կանների ջոկատը: Զինվորական շենք ու շնորհքի
կողմից՝ վոստիկաններից ավելի քիչ բան եր պա-
հանջվում, քանի ժանդարմներից: Նմանապես
ավելի հեշտ եր վոստիկանի համազգեստ պատ-
րաստելը, քանի ժանդարմինը: Յեկ վորովինետև,
ինչպես մենք տեղեկացանք, հաճախ մահապարտ-
ներին միջնաբերդն եյին փոխադրում վոստիկան-
ների ուղեկցությամբ, այդ պատճառով ել վորո-
շեցինք մեր ընկերներին դարձնել վոչ ժան-

դարմներ, այլ վոստիկաններ: Հաշվի առանք նաև
այն, վոր մեր բանվորներին ավելի հեշտ եր վոս-
տիկանների դեր կատարելը, քան թե ժամդարմ-
ների:

Պետք ե վճռելինք նաև բնակարանի հարցը՝
Դա հեշտ խնդիր չեր:

Այն տունը, վորաեղից գուրս են գալու տասը
վոստիկանները ժանդարմի զլխավորությամբ,
անխուսափելիորեն իր վրա յե գրավելու վոչ միայն
հարեան տների, այլև ամբողջ թաղի բնակիչների
ուշադրությունը: Տասը մահապարտների բանտից
փախցնելու դեպքը իշխանությունը, լոթե նույն-
իսկ կամենար եր, անկարող պիտի լիներ թափը-
նել վարշավի բնակիչներից: Ու հենց վոր բազա-
քում տարածվի այն լուրը, վոր նրանց փախցը-
նողները կարծեցյալ վոստիկաններն են յեղեր,
զժվար չի լինի այս փաստը կապիլ այն տան
հետ, վորտեղից գուրս են յեկել այդ անհայտ
յեղանակով ու անհայտ տեղից յեկած վոստի-
կանները:

Պարզ ե, վոր այդ տունը գտնելու գեպքուժ
գաղտնի վոստիկանության ձեռքը կընկնի թելի
ծայրը, վորով նա կհասնի նաև կծիկին, և այն
ժամանակ մեկ մահապարտների տեղը կը ունեն
մյուս մահապարտները:

Հետեաբար տան հարցը չափազանց լուրջ հարց
եր, վորից կախում ուներ այս որսկով ու շատ
վտանգավոր ձեռնարկության հաջող յեկը:

Մեղ հաջողվեց այս խնդիրը լուծել միայն
շնորհիվ պահնորդական այն միջոցառությունն այն ժամանակ
պատերազմական դրության պատճառով: Կարգա-
դրություն արված եր, վոր այն բոլոր տներում,
վորոնց բակերը դեպի յերկու փողոց են գուրս
գալիս, գարպաներից միայն մեկը գիշեր-ցերեկ
բաց լինի, վորպեսզի այդ բակերով մեկ փողոցից
մյուսն անցնելն անկարելի լինի:

— Մենք պետք ե ընտրենք մի այնպիսի տուն,
վորը միջանցիկ բակ ունենա, — առաջարկեց Աննան:

Այս առաջարկության բուն միտքը յես չհաս-
կացաւ:

— Փակ գարպասից կարելի կլինի բոլորին ել
աննկատելի կերպով դուրս թողնել: Հենց վաղը
հեթ պետք ե շինել տալ այդ գարպասի բանա-
յին, նախորոք պատրաստելով փականքի մոմե
կաղապարը:

Այդպիսի մի բնակարան նա նկատի ուներ
Յերուսալիմուկայա փողոցի վրա, տուաջին հարկում:
Այդ տան մուտքը շիտակ գարպասից եր:

— Իսկ տնտեսերեցը:

— Մեր մարդիկն են, բոլորովին հուսալի մար-
դիկ: Այս գործով յես կզբաղվեմ վաղն առավոտ-
վանից ու ինձ հետ մեկտեղ կտանեմ նաև վա-
կանագործին:

Աննան հոգնել չգիտեր: Հետեյալ որն ինձ
հաղորդեց, վոր արդեն ամեն ինչ արված ե, և

առաջարկեց, վոր անձամբ ստուգեմ՝ համապատասխամն և արդյոք իր ընտրած բնակարանը մեր նպատակներին:

Ստուգեցի: Ավելի լավը չեր կարելի ցանկանալ: Աննան յերեխայի նման ուրախ եր և մանրամասն պատմում եր, թե ինչպիսի հաջողությամբ կարելի պիտի լինի մեկը մյուսի հետեւթքաց թողնել բոլոր «փոստիկաններին»:

— Դոնապանը մյուս դարպասի մոտ ե, հասկանում եք: Այս դարպասով վոչ վոք յելումուտ չունի:

Ուրախությունից քիչ եր մնում թոշկոտար:

— Դե յեկեք այժմ մտածենք՝ ել ինչ կա անելու, — հանկարծ նորից գործի անցավ նա:

— Ինչ վոր պետք ե բանտ մտնելու համար, արդեն սարքված ե, իսկ բանտից դուրս գալու ինչպես պիտի լինի, ինձ համար պարզ չե:

Մնաք զբաղվեցինք այդ հարցով ու իսկույն դեմ առանք մի նոր դժվարության:

— Նրանց կհանձնեն, — մահապարտների մասին խոսելիս միշտ ասում եյինք «նրանք», «նրանց», — մերոնք նրանց կտեղավորեն բանտի կարեթի մեջ, Բայց չե վոր կառապանը բանտինն ե, նրան ինչ ենք անելու: Յերբ նա նկատի, վոր ուղեկցող վոստիկաններն ստիպում են քշել այնպիսի ճանապարհով, վորը դեպի միջնաբերդը չետանում, նա կարող ե կանգնեցնել ձիերը հենց առաջին իսկ անկյունում, վորտեղ հանդիպի նրան:

զինվորների շղթան, ու այն ժամանակ ամեն ինչ կքանդվի. կկորչեն թե մերոնք և թե ազատվածները:

Արդեն առաջուց վճռել եյինք «վոստիկաններից» ամեն մեկի ձեռքը տալ մի-մի ավելորդ ատրճանակ՝ ազատվողների համար. սակայն, յիշը ամբողջ քաղաքը հեղեղված եր զինվորներով ու կազակներով, քսան մարդկանց զինված դիմադրությունը նախորոք դատապարտված եր անհաջողության: Վորովհետև անհրաժեշտ եր կառապանին անվաս դարձնել առանց մի աղմուկ հանելու, յես առաջարկեցի քնեցնել նրան հատուկ պատրաստված ծխախոտով:

— Իսկ յեթե նա չի ծխում,

— Վախեցնելի,

— Իսկ յեթե չվախենա, հուսալով վոր ամեն անկյունում զինված պաշտպաններ ունի:

Խորհրդակցության կանչեցինք Մարցելիին, ապագա «ավագին»:

— Դատարկ բան է: Քսան հոգին առանց վորեւ աղմուկ հանելու յել մի մարդու հախից կգան:

Այս պատասխանը գոհացուցիչ չեր վոչ ինձ, վոչ ել Աննայի համար:

— Այս գործի բոլոր մանրաւասնություններն ել պետք ե նախատեսված լինեն:

— Լավ: Մենք ինքներս կմտածենք այս հարցի մասին: Կարող եք հանգիստ լինել: Վատահ յեղեք մեր վրա, Մի բան կհնարենք: Դա այնքան ել

գժվար բան չեւ ինձ անհանգստացնողն ուրիշ բան
եւ ուր պիտի տանենք նրանց:

— Քաղաքից դուրս, — միաբերան պատասխանեցինք նրան յես ու Աննան:

— Շատ ել քաղաքից դուրս, բայց ուր ախար: Չե՞ վոր տեղը պետք եւ փակ լինի: Կարեթը հոքաց դաշտում չի կարելի թողնել. Համ ել այդ անբախտ կառապանին պետք եւ այնպիսի մի հարմար տեղ պարտկել, վոր շուտ չկարողանա այնտեղից դուրս գալ:

Մարցելին իրավունք ուներ. առաջ մենք այդ մասին չեյինք մտածել:

— Թուք վորևե առաջարկություն ունե՞ք այս մասին, — հարցրեցի նրան:

— Վո՞չ: Շատ եմ միտք արել, բայց բան դուրս չի գալիս:

— Մեզ վրա ծանրացավ մի նոր գժվարություն: Չլինի՞ զրա պատճառով մեր ամբողջ ձեռնարկությունը պայթի:

— Պետք եւ մի յելք գտնել, — վերջ տվեց լուսթյանն Աննան:

— Այս հարցը հետաձգենք մինչև առավոտ. գուցե գիշերս մի յելք հնարենք:

— Առայժմ կշունք դատենք մլուս պարագաները, — առաջարկեց Աննան: — Բանոի կարեթը համնում եւ նշանակված տեղր...

— ... կառապանին զոռով ներս ենք խոթում կարեթի մեջ, — կտրեց նրա խոսքը Մարցելին, —

ու դուռը կողպում ենք բանալիով: Մինչեւ դուռը բանան ու նրան ազատեն, մենք՝ ինչքան ել լինի ժամանակ կշահենք.

— Ճիշտ եւ Յեվ հենց այնտեղ ել մեր «վոտիկանները» պետք եւ կերպարանավոլվին ու նորից հասարակ քաղաքացիներ դառնան:

— Դա հեշտ բան եւ նրանցից ամեն մեկը վոստիկանական համազգեստի տակից քաղաքացիական գգեստ հագած կլինի:

— Հեշտը հեշտ եւ, բայց զենքելն ինչ եք անհելու:

Դա գժվար հարց եր: Այն ժամանակները, մանավանդ գիշերով, անցորդներին քանի անգամ խուզարկում եյին: Կորած եր, իշարկե, նա, ում մոտ զենք գտնելին:

Անհեթեթություն կլիներ իհարկե բանն այնտեղ հասցնել, վոր կալանավորներին փախցնելուց հետո, քսան ատրճանակի համար, մարդիկ ժանդարմների ձեռքն ընկնելին: Հետևաբար մեր անելիքը պարզ եր: Վորքան ել զենքերը թանկ լինելին կուսակցության համար, պետք եր նրանցից ձեռք քաշել:

Սակայն այսպիսի վճիռ կարացնելը նշանակում եր վճոել առանց տիրոջ մասնակցության:

— Այդ մասին արդեն խոսել ենք, — հոյտնեց Մարցելին, — բայց մերոնք միաբերան մերժում են այդ բանը. նրանք ուղղակի ասում են. «Զենքերը չենք տա»:

Զենքի կարոտ քաշող ու շատ անգամ ել մեծ
ոխով ու զոհաբերություններով զենք ճարող
քանգորներից այսպիսի պատասխան սատանալը
միանդամայն հասկանալի յեր: Բայց մեզ համար
պարզ եր, վոր անթույլատրելի յե մարդկանց
կյանքը զոհել այն զենքի պահպանության հա-
մար, վորն ինչ ել լինի չես կարողանալու պահ-
պաներ:

— Անհրաժեշտ ե նրանց համոզել:

— Փորձել եմ համոզել... վոչ մի պատճառա-
բանություն նրանց վրա չի ազդում: Հիշեցրի
նրանց կարգապահության մասին, բայց այդ ել
չոգնեց: Լսել անգամ չեն ուզում: Նոր դժվարու-
թյուն... դեռ ինչքան այդպիսի դժվարություն-
ներ կան մեր առաջ լուծելու:

— Լավ, — վճռեց Աննան: — Փոխանակ վոր բո-
լորը փորձանքի մեջ ընկնեն, թող միայն մեկը
ոիսկ անի: Ազատվածները պետք ե տարվեն քա-
ղաքից գուրս: Յերբ վորոշենք տեղը, ուր տարվելու
յեն նրանք, ապա քաղաքի սահմաններից գուրս
ապրող բանվորներից մեկը պետք ե գնա այն
տեղը, բոլոր ատրճանակները հավաքի ու իր
տունը տանի: Իսկ այնտեղեց մենք մի կերպ
կհանենք զենքերը: Ուրեմն շարունակենք: Ազատ-
վածներից ամեն մեկի համար պետք ե բնակա-
բան հատկացված լինի, վոր նրանք կարողանան
իրենց կարգի բերել, հագուստները փոխել, սափր-
վել: Այդ բնակաբաններում, մինչև նրանց գալը,

պետք ե սպասեն յերկաթուղայինները և վայր-
կենապես, հենց առաջին գնացքներով — ապրան-
քատար կլինի, թե մարդատար — ճամբեն նրանց
դեպի սահմանը: Նախքան ժանդարմները գլխի
ընկնեն, մերոնք սահմանին ել վոր հասած չլինեն,
համենայն դեպս պետք ե արդեն հեռու լինեն:
Բնակարաններն արդեն վորոշված են, յերկաթու-
ղայիններն ընտրված, հագուստները պատրաստ
Սափրվելու պարագաներն ել արդեն գնել եմ:

— Հապա «վոստիկանները»:

— Նրանցից մի քանիսին ել պետք կլինի, գոնե-
առժամանակ, պարտկել: Պատկերացնել անգամ
չի կարելի, թե ինչ իրարանցում ե ընկնելու
ժանդարմների մեջ: Կսկսվեն ընդհանուր խուզար-
կություններ, ձերբակալություններ... Չեոք չեն
տա միայն նրանց, վորոնց վրա վոչ մի կասկած
չկա:

Մենք յերկար ծանր ու թիթեվ արինք բոլոր
այս մանրամասնությունները:

Պարզ եր, վոր կալանավորներին պետք եր
քաղաքից գուրս տանել: Առավոտը կանուխ յես
ու Աննան գնացինք հետախուզություն կատարե-
լու ալդ ուղղությամբ:

Որը պայծառ եր: Յերկնքում ամպի վոչ մի
կտոր: Սիրաբանող գույգի վաղ առավոտյան զբո-
սանքը քաղաքից գուրս՝ վոչ-պոքի մեջ չեր կարող
կասկած հարուցել: Քաղաքը նոր եր արթնանում:
Ճանապարհին մեզ հանդիպում եյին ֆաբրիկներ



ու գործարաններ գնացող բանվորներ, հավ. ճիշով և ալլ յթերքներով լիքը զյուղական սայլեր, փորոնք դեպի քաղաքի կենտրոնն ելին գնում. Քանի մոտենում ելինք քաղաքի ծայրին, այնքան տները մանրանում ելին, իսկ հետո սկսվեցին բանջարանոցները՝ կարտոֆիլի, կաղամբի, գազրի, ճակնդեկի մարզերը. Փոքր ինչ հեռու, ճանապարհի մոտ, տախտակե սիցանկապատ տեսանքը. Այն բոպեյին, յերբ մոտենում ելինք ցանկապատին, բազվեց զարպասը, և բակից վարունգով բեռնավորված մի սալլ դուրս յելավ։ Սայլին նստած մարդը ձին կանգնեցրեց, դարպասը փակեց, հետո դարպասի կողքի նեղ դոնակով նորից դուրս յելավ և բանալիս կողպեց դռնակը։ Աննան ձեռքեցս բռնելով ասաց.

— Ահա... Տեսէք, տեսէք,

Այն, դա հենց այն եր, ինչ-վոր մեզ պետք եր։ Մարդը նորից նստեց սայլին, մտրակեց ձիուն, և սայլն արագությամբ տռաջ շարժվեց քաղաքի ուղղությամբ։ Մենք դանդաղ քայլերով ցանկապատին մոտեցանք։

— Յեվ հեռու յել չե...

— Ու այս ճամբան դեպի միջնաբերդին ե տանում։

Ցանկապատը բարձր եր, սեղմ, առանց մի ճեղքվածքի ու արանքի։ Ամեն կողմից լավ քննեցինք ու տնտղեցինք ցանկապատը, Բայց այս քննությունից մենք գոհ չմնացինք։

— Ի՞նչպես անեյինք, վոր ներս մտնեյինք, — հուզված ասաց Աննան։ — Դարպասի վականքը ներսից ե... և, ըստ յերևույթին, վականքի տեղ ծառայում ե հաստ փայտը, վոր պետք ե հետքաշեր, Բայց բակն ինչպես մտնելինք։ Կարծես բերդ լինի։

Ցանկապատին շատ մոտ մի ծառ կար, վորի ձյուղերը, ցանկապատի զլիսով, բանջարանոցի կողմն ելին կախված։ Յես այդ ցույց տվի Աննային։ Բերդի մուտքը գտնված եր։

— Բայց այնտեղ կարող ե կապած շուն լինել, Մեկ ել տնսար այնպիսի հաջոց սկսեց, վոր...

— Ո՞վ կա արդյոք մերոնցից այս կողմերում ապրող, — լարեց իր հիշողությունն Աննան։ — Սպասեցեք, սպասեցեք, Ախր Ստեփանն այստեղ

մոտերքումն եւ ապրումն Այս, այսու Գնանք նրա
մոտ

Մեր բախտից Ստեփանը տանն եռ:
Մեր այսպես անժամանակ գալը նրան ան-
հանգստացրեց:

— Ի՞նչ եւ պատահել:
— Վոչինչ: Գործ կա:
Նա հետաքրքրությամբ աչքերը մեզ հառեց:
— Այստեղ, ձեզանից վոչ հեռու, բարձր ցան-
կապատով շրջապատված մի տեղ կա. չզիտեմ՝
բան, ջարանոց եւ, թե պտղատու այդի: Մենք
անպատճառ պետք եւ իմանանք՝ դարպասի փայ-
տը փականքնի եւ կողպվում, թե սովորական ձե-
վով խրվում եւ յերկաթե պահանգի մեջ:

Նա տարակուսանքով նայում եր մեզ: Նա իր
կյանքում դեռ առիթ չեղ ունեցել այսպիսի
հանձնարարություններ կատարելու:

— Ի՞նչի՞ համար եք ուզում իմանալ:
— Հետո կիմանաք: Բայց մեզ այդ հարկավոր
եւ զիտենալ վորքան կարելի յե շուտ: Կարո՞ղ եք
այդ անել:

— Ի՞նարկե կտրող եմ, բայց վոչինչ չեմ հաս-
կանում:

— Յեվ պետք ել չե, վոր հասկանաք, — վրա
բերեց Անան ծիծաղելով: — Մեր վրա կարող
եք վստահ լինել: Դա խիստ կարևոր եւ

Մեզ հարկավոր տեղեկությունն ստացանք ավե-
լի շուտ, քան թե կարծում եյինք:

Ստեփանն անցավ հարեան սենյակը: Այնտեղից
լսվեց նրա բամբ ձայնը. «Յանեկ», կանչեց նա
մեկին ու յերեք բոպեցից հետ դարձավ:

— Դարպասի փայտն իսկի յել կողպեք չունի:
— Իսկ կապած շուն չկա այնտեղ:
— Ել ինչի՞ առաջուց շտացիք, վոր դրանով ել
եք հետաքրքրվում: Ի՞նչ եւ, չի՞նի՞ յեկել եք միրդ
գողանալու, — կատակի տվեց նա: Նորից գնաց
ու կանչեց Յանեկին:

— Այդ Յանեկս ամենագետ մի տղա յե, —
Ժամանով ասաց Անան:

— Շուն չկա, — հաղորդեց Ստեփանը:
— Վարտեղից եք ստանում այդ բոլոր տեղե-
կությունները:

— Մի տղա ունեմ, վոր ամբողջ որն այդ
ցանկապատի վրայով այն կողմն ու ցատկում:
Տեսնեա մի որ ել գլուխն եւ կոտրելու: Խելքը-
միտքը մրգին եւ տվել:

Գործին անցնելով, առաջարկեցինք նրան լավ
ուսումնասիրել ամբողջ իրադրությունը:

Մենք հաղորդեցինք նրան մեր ծրագիրը:
— Յերբ մերոնք մատենան, դուք արդեն պետք
եւ բանջարանոցում լինեք, վորպեսզի անմիջապես
դարպասը բաց անեք և, կառքը բակ մտնելուն
պես, նորից փակեք: Բանտից փախցնելու յենք
գիշերը: Ատրճանակները դուրս կնետենք ցան-
կապատի վրայով ծառից վոչ հեռու, իսկ դուք
նորից կփակեք դարպասն ու ցանկապատի վրա-

յով անցնելով, զենքերը ձեր տուն կտանեք, Բայց
դուք ի՞նչպես պետք ե դուրս գաք բանջարանո-
ցից, — հանկարծ ինքն իր խոսքը կորեց Աննան:

— Յանեկը վոր կարողանում ե, բա յես չեմ
կարողանա:

— Իսկ կազակներ ու զինվորներ շատ կան
ձեր կողմերում:

— Մեր բանվորական թաղերը նրանք հոժա-
րությամբ չեն մտնում:

— Դե լավ! Հենց նույն որն ել զենքերը ձեր
տնից կհանենք ու կպարտկենք:

Աննան այս աստիճան զգացված եր, վոր նրա
մեջ ցանկություն առաջ յեկավ գուրգուրել՝ մեզ
մեծ ոգնություն ցույց տվող Յանեկին: Բայց յես
ընդդիմացա, վարովիետև յերեխան մեր այցելու-
թյան մասին չպետք ե տեղեկություն ունենար:

— Մենք ձեզ վաղորոք իմաց կտանք, թե
յերբ պետք ե սպասելք բանջարանոցում: — Ու
հրաժեշտ տալով Ստեփանին, քայլերս դեպի քա-
ղաք ուղղեցինք:

— Կարծես թե ամեն ինչ հարթված ե, — ասաց
Աննան, ամփոփելով մեր զբոսանքի արդյունքները:

— Ամեն ինչ պետք ե զեկուցել կենտրոնա-
կան կոմիտեյին:

* * *

Կենտրոնական կոմիտեյի նիստում մեր յերեալն
ամենքին զարմացրեց: Այն որվանից, յերբ կենտ-

րոնական կոմիտեն այդպիսի կասկածամիտ վե-
րաբերմունք գույց տվեց Վիտի ծրագրին — մենք
նիստերին չելինք լինում: Ամենքն ել հավատա-
ցած եյին, վոր յեկել ենք, այսպես ասած, մե-
զայական տալու, այսինքն խոստովանելու, վոր
մենք ցնորդներով ենք տարված յեղել:

— Հը՛, ի՞նչ կա, — խայթող յեղանակով հարց-
նում եյին մեզ:

Մենք պատասխան տալու չելինք շտապում:
համբերությամբ սպասում ելինք, վոր բոլորը հա-
վաքվեն:

— Այ, կլսեք:

Յերբ բոլորը հավաքվեցին, յես գեկուցումս
սկսեցի մի այսպիսի պահանջով, վորն իսկույն
զբարեց ամենքի ուշադրությունը:

— Կենտրոնական կոմիտեն պետք ե առաջուց
քանվորներին ուղղած մի կոչ պատրաստի տասը
քահապարաներին ազատելու մասին: Առաջարկում
եմ այդ կոչը այսպես վերնագրել՝ «Մեր ամնիս-
տիան»*:

— Արդյոք շատ չեք տարվում, — կասկածանքով
հարցրեց Յանը:

— Կարծես թե վոչ: Ստուգեցեք: Հենց գրա
համար ել յեկել ենք: — Յեվ յես մանրամասն
զեկուցեցի մեր բոլոր պատրաստությունների
մասին:

* Ամիստիա — քաղաքական հանցանքների թողություն կամ
ներում. վոր չնորհում ե բարձրագույն իշխանության կողմից:

Նախկին թերահավատները փոխեցին իրենց վերաբերմունքը դեպի սկսած գործը, վորովհետեւ համոզվեցին, վոր դա իսկապես գործ եւ և վոչ թե ցնորք:

Խորիմաց Յանն իսկույն հասկացավ մեր գործի թույլ տեղը.

— Իսկ կառապանին, կառապանին ի՞նչ եք անելու:

Մենք հաղորդեցինք Մարցելիի հետ մեր ունեցած գրույցի բովանդակությունը:

Ինչպես մենք, այնպես ել սրանք բոլորը դըժգոհ մնացին արդ պատասխանից:

— Պետք եւ այսուղե կանչել նրան։ Դա պլանի ամենաթույլ տեղն եւ։

Հարցի հետագա քննարկումը հետաձգվեց մինչև Մարցելիի գալը։ Ասնան գնաց նրան կանչելու։

Ինչպես և առաջ, նրան զայրացնում եր այն հանգամանքը, վոր այսպիսի «գատարկ» բաների համար նրան գործից հետ ենք պահում։

— Սատանան տանի, եսպես ել բան կլինի։ Այս գտանգավոր ու պատասխանատու զործը գլուխ բերելու համար մեղ եք ընտրել, իսկ բանտի մի քոսոտ կառապանին անվնաս դարձնելու հարցն այնքան լուրջ բան եք զինում, վոր ամբողջ կենարոնական կոմիտեն դրանով եւ զբաղվում։ Յես հո ասացի, վոր պատասխանատվությունը մեր վրա յենք վերցնում։

Նկատելով, վոր իր պատասխանը մեղ չգոհացարեց, նա ել ավելի զրգոված ավելացրեց։

— Դե ի՞նչ կարող եմ ասել ձեզ։ Կառքի վրա, կառապանի կողքին կնստեն մերոնք, կառապանը մեջտեղում կլինի։ Այսպիսով ուրեմն նրա ամեն մի շարժումը կստուզվի անընդհատ։ Իսկ այնուհետեւ կտեսնենք՝ ի՞նչ եւ լինում... Ճանապարհին հո մի խուլ փողոց կլինի, վորտեղ կկարողանանք մեր հաշիվը տեսնել նրա հետ՝ ինչպես վոր հարկն եւ։

Նա այնքան վստահ եր իր ասածներին, վոր այդ վստահությունն անցավ նաև ուրիշներին։

— Դե լավ, — ասաց Յանը։ — Ե՞լ ի՞նչ եւ հարկարգվո՞ւ։

— Այ ինչ։ Անհրաժեշտ ե, վոր Բոլեսլավը, կենտրոնական կոմիտեի անունից, միքանի ջերմ խոսք ասի մերոնց՝ բանտ ուղարկելուց առաջ ու հանգստացնի, վոր անհաջողության դեպքում նրանց ընտանիքները յերեսի վրա չեն մնաւ։

Մարցելին իրավացի յեր. բայց այդ ըոպեյին թեև միայն պատրաստություններն եյին վեր։ Ջացված, բայց և այնպես բոլորն ել այնքան լավ եյին տրամադրված, վոր յես լուրջ կերպով նրան առացի։

— Բարիյերթի մի աղոթք ել յես կարող եմ կարդալ քեզ։

— Իսկ յես սատանի բաժին կանեմ քեզ։

Պատրաստություններն ավարտված եյին։ Մոռու
եր միայն յելութի ժամկետը վորոշել։

Այդ որն ամբողջապես նվիրեցինք բոլոր ման-
րամանությունների մանրազնին ստուգմանը։
Ամեն ինչ պատրաստ եր։

Եերեկոյան ներկա յեղանք սերտողության վերջ-
նական փորձին։

«Ռոտմիստրը», «ավագը», «գոստիկանները»
համազգեստները հագած՝ քմծիծաղ տալով՝ իրար
եյին նայում։

— Միայն ոեխներդ չեն սազում, — ասաց հրո-
հանգիչ սպան։

«Ռեխները» ճիշտ՝ վոր շատ հարմար չեյին
նրանց դերերին։ Առաջարկողներ յեղան գրիմի*
ոգնության դիմել, բայց բոլորն ել այդ ավելորդ
համարեցին։

— Դատարկ բան ե, արսպես ել յոլա կեր-
թանք։ Ռեխներս հո չեն ստուգելու։

— Ի՞արկե, „ոոշեվելիվայisce“—այս անդամ
ճիշտ արտասահեց Յուրօք—Այս խոսքը կոտիպի
նրանց արագ զարժիք ժամանակ չեն ունենա
յերեսներս դիտելու։

— Դե, ընկերներ, — հանդիսավոր յեղանակով
վերջ դրեց Աննան արս կատակներին, — եգուց
յերեկոյան միտք ունենք...»

Զթողին, վոր վերջացնի։

* Դրիմ — հատուկ պատրաստված ներկեր, վորով դերասահներն
իրենց գեմքն են փոխում խաղացած գեղին համապատասխան (Վ.Թ.)։

— Վերքան շուտ, այսքան լավ! Բոլորովին
պատրաստ ենք։

— Եգուց, թող եգուց լինի, — ասաց Մարցե-
լին։

Յեվ հանկարծ բոլորն ել ձայները կտրեցին...
Այսպես ե լինում և ուազմաճակատում։ վճռա-
կան ճակատամարտից առաջ զինվորները մի պահ
խաղաղվում են։

Յես ոգտագործեցի այդ վայրկյանը։

— Ընկերներ, Ամենքս հավատացած ենք գործի
հաջողությանը։ հաղորդելով ձեզ՝ բոլոր մասնակ-
ցողներից՝ Կենտրոնական կոմիտեյի վողջույնը և
բարեմաղթությունները, նույն Կենտրոնական
կոմիտեյի կողմից լիազորված եմ հայտնելու,
վոր, ինչ յելք ել ունենա այս գործը, ձեր ընտա-
նիքների հոգատարությունն իր վրա յե վերցնում
կուսակցությունը։ Յես, վոր անգաղար անձամբ
հետեւիել եմ բոլոր պատրաստություններին,
առանց վարանման հայտնում եմ, վոր հաջողու-
թյունն անկասկած ե, ու յեթե Կենտրոնական
կոմիտեն պատվիրել ե ինձ հաղորդել ձեզ իր
ընդունած վորոշումը, ապա այդ նրա համար
ե, վոր ձեղանից մի քանիսը, համարելով իրենց
մասնակցությունն այս գործին կուսակցականի
պատրաստականությունն, միննույն ժամանակ մտա-
հոգված են այս հարցով, թե ինչ ե լինելու
իրենց ընտանիքի վիճակը, յեթե իրենք կորչեն։
Թող, ուղեմն, ամեն մեկդ արի լինի։ Զեզնից

յուրաքանչյուրը կատարում ե իր պարտքը կուսակցության հանգեափ. կուսակցությունն ել կկատարի դեպի ամեն մեկդ ունեցած իր պարտքը:

Իւձ ամեն կողմից շրջապատեցին ու սկսեցին ձեռքս սեղմել:

Այս տեսարանից լցված՝ Աննայի աչքերին յերեվացին արտասուբի կաթիւներ:

Հրահանզիչ սպան հուզված՝ վոչ մի խոսք չասաց ու լուռ սեղմեց բոլորի ձեռքը:

Իսկ այն տասնեմեկ հոգին, վորոնց վիճակված եր վաղվան որը վտանգի յենթարկել իրենց կրանքը, զարմանալի անդորրությամբ կրկնում ելին.

— Գործը գլուխ կրերենք... կազատենք, համաթե ուրախություն կլինի...

Հասավ վճռական որը... Մի սրտամաշ, վերջ չունեցնելու որ: Այն բան պատրաստ ե, տասնյակ անգամ ստուգված. մինչև գործի ձեռնարկումը, վոր սկսելու ելինք ուշ յերեկոյան, ուրիշ անելիք չունենք:

Յերեկոյան ժամը յոթին բոլորս հավաքվեցինք Յերուալիմսկայա փողոցում գտնվող տունը: Արդեն բոլորը համազգեստով ելին:

Յեկավ նաև հրահանզիչը, վորպեսզի վերջին անգամն ստուգի՝ ամեն ինչ ոլատրամատ ե, թե վոչ:

Խռսակցությունը չեր բռնում, դրա համար ել ժամանակն անցնում եր մաշող գանդաղությամբ:

Խփեց ժամի ութը: Միայն ութը Ելի յերկու ժամ պետք ե սպասել:

Ժամի տասին տեղիցս վեր կացաւ:

— Դե, պատրաստվեցեք. յես գնում եմ հեռախոսելուս կես ժամից վոչ ուշ կվերադառնամ, ու դուք կգնաք:

Աննան ինձ ձանապարհ դրեց ու հետեւիցս փակեց դարպասը:

Քալիերս ուղղեցի առաջուց պայմանադրված բնակարանը և հեռախոսի մոտ կանչեցի քննության տակ գտնվողների բանտապետին:

— Ո՞վ ե հեռախոսի մոտ:

— Քննության յենթակաների բանտապետը:

— Զեղ հետ խոսում ե զլխավոր վոստիկանապետը:

— Լուսմ եմ, ձերդ գերազանցություն:

— Մեկ ժամից վոչ ուշ ձեզ մոտ կզա ժանդարմների ոստմիստր ֆոն-Բուղբերզը և կրերի իմ հրամանագիրը: Մինչ այդ՝ կալանավորները պետք ե պատրաստ լինեն վարշավի միջնորդութիւնը տասներորդ պավիլոննը փոխադրվելու: Ճշշտությամբ գրեցեք ազգանունները:

— Լուսմ եմ:



Թելաղրեցի տասը մահապարտների աղբանունները:

— Գրեցիք:

— Նոյնությամբ, ձերդ գերազանցություն:
— Կարդացեք:

Բանտապետը կարգաց:

— Ճիշտ ե: Առանց հապաղման գործի անցեք: Մինչև նրա գալն ամեն ինչ պատրաստ լինի: Կպատրաստեք բանտի կարեթք: Կանվայ հարկավոր չե, նա հետը կբերի իր կանվոյը: Ամեն բան հասկացաք:

— Ճիշտ և ճիշտ:

— Պետք ե այնպիս անեք, վոր չուշացնեք:
— Լսում եմ: Ամեն ինչ կկատարվի:

Առաջին քայլն արված եր: Յես վազեվազ Յերուսալիմսկայա փողոցը դարձա:

Լուռ՝ իրար ձեռք սեղմեցինք, բայց այդ լոռությունը շատ պերճախոս եր:

Աննան «Վոստիկաններին» մեկ-մեկ փողոց դուրս թողեց դարձասից: Յես լույսը մարեցի սենյակում և մու եցա պատուհանին, վոր տեսնեմ, թե ինչպես են դուրս գալու փողոցի մեջտեղը:

Հավաքվեցին, շարքի կանգնեցին, «Ռոտոմիստրը» տվեց հրամանը, ու նրանք, իսկական զինվորների նման համաշափ քայլերով, առաջ շարժվեցին:

Աննան սենյակ վերադարձավ. նա հուզված եր:

— Ամենազլիսավորն աչքաթող արինք... նոր միայն միտքս ընկավ այդ:

— Ի՞նչը:

— Ի՞նչ անուն պիտի տան նրանք՝ իրար դիմելիս «Ռոտոմիստրն» ու «ավազը» ի՞նչպես են անվանելու նրանց:

— Անհոգ յեղեք: Հրահանգիչն այդ նախառեսել ե: Նրանցից ամեն մեկն իր ազգանունն ունի:

Նա նորից կենդանացավ, բայց հուզմունքից վոտները ծալվեցին, ու նա՝ միանգաւծայն ուժաւապառ՝ ընկավ աթոռին: Միքանի ըոպեյից վոտքի կանգնեց, կանչեց տանտիրուհուն և բոլորովին հանգիստ ձայնով կարգադրեց:

— Նայեցեք, բան-ման հո չե՞ն մոռացել, ու իսկույն կարգի բերեք: Զլինի՞ թե վորևէ հետք մնա...

— Անհոգ յեղեք: Կհավաքենք:

— Մենք գնում ենք:

— Աննա... — կմկմաց տանտիրուհին:

— Ի՞նչ կա: Հա, գիտեմ, զիտեմ, Ուզում եք իմանալ՝ ի՞նչպես վերջացավ:

— Ա:

— Վաղն իմաց կտամ:

Մենք հրաժեշտ տվինք ու գնացինք այն բնակարանը, ուր պետք ե բերվեյին բոլոր տեղեկությունները:

Մերոնք գնացին բանտ: Այնտեղ նրանց արդեն սպասում եին, ու հենց վոր «Փոն-Բուղբերը»

հանձնեց գոնապտնին ծրարը, մուտքի մոտ սպա-
սող «ավազը» բարձրաձայն գոչեց.

— Բաց արա:

Դարպասը բացվեց: «Ֆոն-Բուդբերգն» շտուպով
վեր բորձրացավ սանդուխքով՝ բանաի նա-
խամուտն ու ներս մտնելով, քայլերն ուղղեց
դեպի գրասենյակ: «Կանվոյը» կանդ առավ բան-
տի շենքի առաջ: Հենց այստեղ ել կանգնած եր
կարեթը, կառապանն ել իր տեղում նստած:

Դեռ սանդուխքի գլխից «ֆոն-Բուդբերգը»
բարձր ձայնով դարձավ ավագ վերակացույին.

— Շուտ, բանտապետին կանչիր:

— Արդեն սպասում են գրասենյակում, ձեզդ
գերազանցություն:

Ներս մտնող «ոստմիստրին» ընդառաջ յելակ
բանտապետը:

— Ամէն բան պատրամստ ե:

— Այս, իսկությամբ: — Դուրս հանիր կալա-
նավորներին, — կանչեց նա ավագ վերակացու-
յին:

«Ֆոն-Բուդբերգի» հանձնած ծրարին բանտա-
պետը համարյա չնայեց: Նա բաց արեց ծրարն
ու՝ զրությունը գործին հարակցելով՝ ասաց:

— Նորին գերազանցությունն արդեն հեռախո-
սել եւ:

— Գիտեմ, — չոր ու ցամաք պատասխանեց
«օստմիստրը»:

Մենք նրան զկուշացրել ենք, վոր բանտի
վարչության հետ խոռակցություն չբանա ու
բաժանաբար վերաբերվի:

Ինչ-վոր գործով արագ-արագ գրասենյակ մը-
տավ «ավազը»:

— Պոշեվելիվայտես, — գոռաց «ֆոն-Բուդբեր-
գը»:

«Ավազը» անհայտացավ:

— Արդեն գուրս են հանում, — ասաց բանտա-
պետը հանգստացնելու համար:

— Հանձնողական թուղթը պատրամստ եւ:

— Այս, իսկությամբ:

— Տվեք:

Սանդուխքի վրա վոտքի ձայն լսելով, նա թուղթը
վերցրեց ու սրան գուրս յեկավ:

— Մեկ, յերկու, յերեք... ստուգում եր նա կա-
լանավորներին:

— Կհրամայեք զրասինյակ բերել նրանց:

— Հարկավոր չե: Ուղղակի բակը տարեք:

Մի բոպե գրասենյակ վերադարձավ նա: Բան-
տապետն արդեն ստորագրել եր թուղթը: «Հանձ-
նեցի» խոսքի տակ «օստմիստրը» զրեց՝ «Ընդու-
նեցի», վոր և վավերացրեց իր ստորագրությամբ:

Այս միքանի վայրկյանում «վոստիկանները»
շարվեցին բակում և կազմեցին մի տեսակ մի-
ջանցք, վորը տանում եր նախամուաի սանդուխ-
քից մինչև կարեթը: Բոլոր կալանավորներին
միասին չհանեցին սանդուխքի գլուխը, այլ մեկ

մեկ, վորպեսզի ժամանակ ունենան ամեն-մեկին
կարեթը նստացնելու:

Կալանավորները թեև գիտելին, վոր իրենց
տանում են մահվան պատժի, բայց և այնպես,
«վոստիկանների» շարքերի վրա թշնամական հա-
յացք նետելուց հետո, հանդարտ կերպով տեղա-
վորվեցին կարեթում. արդյոք այդ նրանից եր,
վոր արգեն ընտելացել եյին այն մտքին, վոր
իրենց մահ և սպասում, թե այնքան հուսահատ-
վել եյին, վոր ամեն որ, ամեն բոպե իրենց որ-
հասական վախճանին սպասելուց ման ավելի
գերազանելի եյին համարում:

Յուդիցկին եր միայն՝ յեռանդուն յերիտասար-
դը, վոր դուրս գալով սանդուխքի գլուխը, չորս
կողմն եր նայում, ասես մի ծակ, մի արանք փլնու-
սելով, վոր մի կերպ գարպասից դուրս ձկվել
կարողանաւ. Բայց «ավագն» իր պաշտօնին ար-
ժանի բարձրության վրա գտնվեց:

— Դե, դե, տես հա՞ — Ու Յուդիցկու թեից
բոնած կոպտությամբ կարեթը բոթեց նրան:

Սանդուխքի գլխին յերևացին «ոռոտմիտրն»
ու բանտապեար, վորոնք հեռվից դիտում եյին,
թե ինչպես են տեղափորում կալանավորներին:

— Կատաղի մարդիկ են, — հարցրեց «ոռոտ-
միտրը»:

— Կան և կատաղիներ:

— Իվաննի:

«Ավագը» ձգվեց լարի պես.

— Հինգ մարդ ներսը, յերկուսը կառապանի
կողքին, գու և յերկու մարդ հետեմց:

— Լսում եմ, ձերդ գերազանցություն:

«Վոստիկանները» տեղավորվեցին հրամանի
համաձայն:

«Ավագն» սպասում եր հետագա կարգադրու-
թյուններին:

— Յես առաջ կը շեմ ու միջնաբերդի դարպասի
մոտ ձեզ կսպասեմ:

— Լսում եմ, ձերդ գերազանցություն:

— Դե, առաջ:

Դարպասը բացվեց, և կարեթը դանդաղու-
թյամբ փողոց յելավ: «Մոտմիտրը» շնորհ արեց
բանտապետի ձեռքը սեղմելու և մեկնեց կարեթի
հետեմց:

Գիշերվա տամներկուս և կեսն եր, յերբ նա
մոտեցավ այն տանը, ուր մենք տեղեկություն-
ների եյինք սպասում: Դոնապանը, վոր մեր մարդն
եր ու կուսակցական և վորին նախապես հաղորդ-
ված եր, վոր մեզ մոտ մարդիկ են գալու, իսկույն
բացեց դարպասը: Յուրն շտապ ներս վագեց:

— Եեղավ, — ցնծությամբ հայտնեց նա մեզ:
Մենք վրա ընկանք նրան համբուրելու:

Նա հենց այստեղ ել թափեց վրայից համագ-
գեստն ու հինգ բոպե անց հեռացավ:

— Եեղավ, բայց դեռ վոչ բոլորը, — հառաչեց
Աննան:

— Իսկ ինչ յեղավ այսուհետե...

* *
Հուռ, ատամները սեղմած, նստել եյին կարե-
թում մահվան դուռը գնացողները:

Հուռ, հազիվ իրենց զսպելով, նստել եյին և
«վոստիկանները»:

Յեվ հանկարծ ամեն ինչ միանգամից փոխվեց,
կենդանացափ: Կարեթն արագությամբ ընթացավ
սալահատակով: Անիվների գոգոսցից վոչինչ չեր
լսվում:

«Ճաղատր», գդակը հանելով գլխից, ուրախ-
ուրախ գոշեց.

— Ընկերներ, ճանաչում եք ինձ... Յես ճա-
դան եմ: Տեսեք: Մենք ձեզ գողացանք ու դեպի
ազատություն ենք տանում:

Ազատվածները շշմած իրար եյին նայում, չհա-
վատալով իրենց ականջին ու չհասկանալով՝ իրա-
կանություն ե այդ, թե մի յերազ:

— Ճիշտ ե, ճիշտ, — հավատիացնում եյին
մյուս «վոստիկանները»:

Յերեվակայել անդամ չի կարելի, թե ինչ եր
կատարվում կարեթում: Մարդիկ գրկախառն-
վում եյին, համբուրվում ու իրար ձեռք սեղմում,
մտահան անելով մի բոպե, վոր դեռ գործը չի
ավարտված, վոր դեռ վերջնական ազատության
ճանապարհին կարող են խոչընդոտների հանդիպել:

«Վոստիկաններից» մեկը վերջ տվեց ցնծու-
թյանը:

— Յեղբայրներ, վերցրեք այս ատրճանակները:

Ու մի ակնթարթում ազատվածները բրառ-
նինգներով զինվեցին:

— Պետք կգա, — բացատրեց Ճաղատը: —
Քսան մարդ ենք... Յեթե նեղն ընկնենք, կճեղքենք,
կանցնենք:

Կարեթը հանկարծ կանգ առավ:

— Ես ինչ պատահեց:

Բոլորն ատրճանակները պատրանից դուրս հա-
նեցին:

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց Ճաղատը, վլուխը
կարեթի դռան փոքրիկ պատուհանին մոտեցնելով:

— Լոեցեք, — շնչաց դռան մյուս կողմից
Մարցելին:

Նա յեր, վոր կարեթը կանգնեցրեց, գոռալով.


— Կանգնիր, Անիվը...

Կառապանը ցած իջավ իր տեղից, մոտեցավ
անվին, վորի մոտ յերկու «վոստիկան» կռացած
ինչ-վոր բան եյին կարգի բերում: Կառապանը
նույնպես կռացավ, բայց նույն վայրկանին,
հանկարծ բռնելով նրան աքցանի պես, սղմեցին
կոկորդը... Ապա բերանը թաշկինակ կոխելով,
վերցրին ձեռքերի վրա ու խոթեցին կարեթը:

— Առաջ, քշիր:

Կարեթում նստածները նոր միայն գլխի ըն-
կան, թե ինչու յեր կանգ առել կարեթը:

— Հանդարտ պառկիր, թե չե կսպանենք, —
գոռաց մեկը կառքի հատակին լեղին պատռած և
անշարժ վեր ընկած կառապանի վրա:



Իսկ կարեթը նորից առաջ գնաց քաղաքից դուրս, բանջարանոցների կողմը։ Բանջարանոցի դարպասը բացվեց, կարեթը խրվեց վարունգի մարգերի մեջ, ու դարպասը նորից փակվեց։

Սկսվեց «վոստիկանների» կերպարանափոխումը. նրանք նորից աշխարհիկ մարդիկ դարձան։ Ստեֆանը մոտենում եր ամենքին ու հավաքում ատրճանակները պարկի մեջ։

— Սպասեցեք, Այստեղ ամենքիդ համար ամառվա վերաբկուներ ու գլխարկներ կան։ Վերաբկուների զբաններում հասցեներ կան, գրված, թե ով ուր ե գնալու։

Այս մասին հոգ եր տարել Աննան։

— Կառապանի վրայից կողպել կարեթի դուռը, — կարգադրեց Մարցելին։

— Պատրաստ ե։

— Բակից դուրս յեխել մեկ-մեկ ու գնալ իր համար նշանակված հասցեյով։

Ու միքանի ըոպեյում բակը գատարկվեց։ Մնացին միայն Ստեֆանն ու Մարցելին։

— Դե, Մարցելիյ, գնացեք և դուք, իսկ յես դարպասը կկողպեմ։

— Կողպեցեք, Յես պարսպի վրայով կանցնեմ։

— Ինչո՞ւ։

— Յերբ դուք արդեն պարսպի այն կողմում կլինեք, յես պատի վրայից կնետեմ ատրճանակների պարկը. այդպես ավելի ապահով կլինի.. թե չե՛ մեկ ել տեսար մեկը յերևաց,

Ստեֆանը դարպասը կողակեց ու պարսպի գլուխը
բարձրացավ:

— Վոչ-վոք չի յերեվում: Տուր ինձ:

Այս մեկն ել յեղավ: Գնացին և սրանք:

Մարցելին յեկավ մեզ մոտ գեկուցելու:

Այս անգամ նրա սիրտն ել եր լցված: Ուրախ-
ուրախ վրան թափվեցինք: Ռւրիշ ժամանակ լի-
ներ, նա մեզ գլխից ռադ կաներ, բայց հիմա
սրտաշարժ քնքությամբ համբուրվեց մեզ հետ:

Առավոտյան ժամի 4-ն եւ Դուրսն արդեն
լույս եւ Թեյի ժամանակ, վոր Աննան եր պատ-
րաստել, Մարցելին պատմեց մեզ, թե ինչպես
եր ամեն բան կատարվել:

Հանկարծ մեկը պայմանական նշանով թակեց
բնակարանի դուռը:

— Ո՞վ կարող ել լինել:

Վարանման մեջ մենք իրար եյինք նայում,
Բացի Յուրից և Մարցելիյից, վոչ-վոք չպետք ե
գար մեզ մոտ:

Ներս մտավ «վոստիկաններից» մեկը՝ «Բար-
դեկը»: Յերեսին գույն չկար:

— Հասցեն շինելիս գրպանում թողեցի: Շտա-
պում եյի...

Մեր ուրախ տրամադրությունն իսկույն չքացավ:

— Ազգանունը չե՞ք հիշում:

— Ազգանունը հիշում եմ — Պավլովսկիյ ե,
բայց հասցեն...

Աննան դիտեր հասցեն:

Ահա թե ինչ, — միանգամից վճռեց նա, —
դուք Մարցելիյի հետ գնացեք Պավլովսկինց մոտ
և իսկույն փոխադրեցեք նրանց մի վորեւ ուրիշ
ուայոն: Յեթե կարողացանք — մի յերեք ժամից
հետո, ավելի շուտ չենք հասնի — կփոխադրենք
նաև նրանց գույրը, իսկ թե վոր ուշանանք, թող
գույրը կորչի, գոնե մարդկանց փրկած կլինենք:
Գնացեք, պետք ե շտապել:

Մենք Պավլովսկինց մասին անհանգիստ չե-
յինք: Մինչև շինելը գտնեն, մինչև հասցեն խմա-
նան ու մինչև խուզարկելու գան, կանցնի մի-
քանի ժամ, իսկ մինչ այդ Պավլովսկինելն արդեն
ապահով տեղում կլինեն:

Զնայած դրան, ողը ցնդվեց այն ուրախ զգաց-
մունքը, վորը համակել եր մեզ Մարցելիյի բերած
լուրի պատճառով:

Ժամի յօթին, արդեն մի ուրիշ բնակարանում,
մեզ պետք ե տեղեկություն հասցնելին, թե ին-
չնի վերջացավ ազատվածներին յերկաթուղով
դեպի սահմանը փոխադրելու գործը, իսկ Մտե-
ֆանը պետք ե լուր բերեր նույն տեղը, թե վոս-
տիկանությունն արդեն սկսել ե տագնապը, թե վոչ:

Մինչև ժամի 6-ը ստիպված եյինք անգործ
նստել այս տանը:

Դա շատ սրտամաշ մի բան եր:

— Այսպես թե այնպես, մեծ գործ արեցինք:
Տեսնենք՝ ինչ պիտի ասի այժմ Յանը, — այս
խոսքերով յես աշխատում եյի զբաղեցնել Ան-

նային, վորը սոսկալի հոգնածություն եր զգում
հիմա, յերբ գործն արդեն կատարված եր:

Նա միքիչ գլուխը վայր դրեց, սակայն ըռպե
առ ըռպե ժամացույցին եր նայում ժամանակը
չէ արդյոք գնալու:

Ժամը վեցին գնացինք մյուս բնակարանը:

Ինչպես մենք հետո իմացանք, հենց նույն ժա-
մին բանջարանոցի տերը տուն ե վերադառնում
իր սայլով. նա կանգնեցնում և ձին, բաց և
անում դռնակը և, ոճից խայթածի պես, նորից
փողոց և նետվում:

— Հասկ՞օ, ոգնեցեք:

Ամեն կողմից մարդիկ են վազում, կանչում են
վոստիկաններին. հավաքված ամբոխը ալիքի նման
թափում և բանջարանոցը:

Ստեֆանը նույն ամբոխի մեջ և լինում:

— Զեռ մի տաք, ձեռ մի տաք, — գոռում եր
վախեցած վոստիկանը՝ սուլոց սուլոցի հետեւից
արձակելով: Վազում գալիս են ուրիշ վոստիկան-
ներ, ինչպես և թաղային վոստիկանը:

— Տես, տես արածները:

Նա հրամայում ե վոստիկաններին դուրս անել
ժողովրդին բանջարանոցից ու գոնակի առաջ
վոստիկաններ կանգնեցնել, իսկ ինքը գնում և
հեռախոսով պրիստավին հայտնելու: Կես ժամ
անցած գալիս ե և պրիստավը:

— Ուրիշ տեղ չեն գտել: Անիծված սոցիալիստ-
ներ: Անպատճառ իմ թաղը պետք ե ընտրեյին...

Փորձված խուզարկուի աչքերով դիտեց նա
բանջարանոցը: Տեսնելով բանջարանոցում այս ու
այն տեղ թափթփած վոստիկանական համագետստ-
ները, գլխի ընկավ:

— Սպանել են ու հենց այստեղ ել թաղել
անորենները: Պետք ե փորել հանել:

Նա մոտեցավ կարեթին:

— Կողպած ե: Մեջը, յերեխ, սպանվածներ կան:
Մինչև քննիչի գալը վոչ մի բանի ձեռք չտալ, —
հրաման արձակեց նա թաղային վոստիկանին,
կառք նստեց և գնաց թաղային վոստիկանատուն՝
գեպքի մասին գլխավոր վոստիկանապետին հե-
ռախոսուելու:

Այս լուրերը մեզ բերեց Ստեֆանը և իսկույն
հետ գարձավ: Ազատվածներն այդ միջոցին ար-
դեն զեպի սահմանն ելին սլանում գնացըներով:

Միայն ժամը իննին մոտ ժամնդարմները պա-
տահարի վայրը յեկան:

Ժանդարմների գնդաւշետը, վոր քննության
ղեկավարողն եր, ուշի ուշով դիտելով ամբողջ
բակը, մոտեցավ բանտի կարեթին: Ամբողջ ուժով
քաշեց զոնակը, բայց դուռը չըտցվեց:

— Փականագործ:

Ցեկավ փականագործը: Բացին գոնակը... ու
կարեթի միջից դուրս քաշեցին ձեռքերը հետ
կապած կիսամեռ կառապանին: Առանց ձեռքի կա-
պերն արձակելու, թաշկինակը բերնից հանեցին:
Նա հազիվ եր կարողանում կանգնել վոտքի վրա:

— Ո՞վ ես դու:
 — Կառապանն եմ:
 — Ի՞նչ կառապան:
 — Քննության քննիչակա հանցագործների բան-
 տի կառապանը:
 — Այդ մվ և քեզ այդպես...
 — Վոստիկանները:
 — Լավ վոստիկաններ են: Դու նրանց հետ
 խոսքդ մեկ ելիր արել:
 — Ո՞ւմ հետ:
 — Դե այդ հետո կերևա: Կանվոյսվ տարեք
 սրան պահնորդական վոստիկանատուն:
 Ժանդարմների գնդապետը միայն այն կարո-
 ղացավ պարզել, վոր կարեթը բանտինն եւ նա գնաց
 գեկուցելու զլիսավոր վոստիկանապետ Մայերին:
 Այս անգամ նա սովորված չեղավ սպասելու
 գլխավոր վոստիկանապետի ընդունելությանը:
 Սովորաբար կառապանը կալանավորներ փո-
 խադրելուց հետո իսկույն բանտ եր վերադառ-
 նում: Այդ գիշեր նա չվերադառավ, ու բանտում
 անհանգիստ եյին: Բանտապետը սիրտ արեց ան-
 հանգստացնել Մայերին և վաղ առավոտյան
 զանդահարեց վոստիկանության որապահին:
 Հենց նույն պահին ել պրիստավն իր զեկու-
 ցումն եր անում:
 Գլխավոր վոստիկանապետն սպասում եր ժան-
 դարմների գնդապետի գեկուցմանը:
 Բարկությունից կը առ կտրել նա...



— Ի՞նքս բանա կցնամ ձեզ հետ: Ո՞ւմ կար-
 գագրությամբ եք փոխադրել կալանավորներին,
 հարձակվեց նա բանտապետի վրա:
 — Չերդ գերազանցության:
 — Ի՞մ:
 — Այն, զուք հաճեցիք հեռախոսով կարգագրել:
 — Դուք խելագարված եք:
 — Ահավասիկ և թուղթը:
 Գլխավոր վոստիկանապետը աչքերը թղթին սե-
 վեռեց:
 — Ստորագրությունն իմս ե, բայց յես չեմ
 ստորագրել:
 Զերբարկալեցիննակ բանտապետին: Նրա հարցա-
 քննությունից իմացան «Փոն-Բուդբերգի» մասին,

4084

հեռախոսով արված կարգադրության մասին։ Կո ուա
պանը պատմեց, թե ինչ խաղ են խաղացել իր զլխին։



— Տեսեք թե ինչ աստիճան լրբության են հա-
սեր — վրդովկում եր զլխափոր վոստիկանապետը։

Յերեք ժամ անցած ամբողջ Վարշավում փակցը-
ված եր մեր թուցիկը, վոր ուներ այս խոշոր
վերնագիրը։

«ՄԵՐ Ա.ՄՆԻՍՏԻԱՆ»

Թուցիկում զրված եր, վոր մենք վոչ վորից
ամիստիա չենք սպասում, այլ ինքներս ենք
վերցնում այն, ու մեկ-մեկ հիշվում եյին մեր ձեռ-
քով «ամիստիա» ստացածների ազգանունները։

Կատաղության հասցրած ժանդարմներն ամեն
կողմ ընկած խուզարկություններ ու ձերբակա-
լություններ եյին անում, բայց ազատվածներն
արդեն հեռու եյին, Նրանց հետեվից համար ան-
կարելի յեր։ Ազատության գործին մասնակցող-
ներից վոչ-վոր չտուժեց։



ՀՀ Ազգային գրադարան



NL0398177

3734

ԳԻՒԾ 1 ԱՐԵՎ.
Цена Պ ր ւ բ .

На армянском языке

Ф. КОН

УВОЗ ДЕСЯТИ СМЕРТНИКОВ

АЗ.-ЧЕР. КРАЕВОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО

„ГРО“

Ростов-Дон

1937